ԱՄԱՆՈՐԻ ԽՈՀ

Սիրելիի մը դիակին առջեւ
Ինչպէս մենք կ'ողբանք յուսահատ, նկուն,
Նոյնպէս, հին տարի, քեզ այս իրիկուն
Կ'ողբամ, կ'ափսոսամ անցքդ կարնատեւ:

Հին տարին ո՛րքան արժած ըլլայ սուղ,
Ու նորը թրւի վառ ու պերճագեղ,
Հինը կը մնայ վատնուած արժէք,
Յաւէտ կորսուած դրամագլուխ:

Հինն որքան եղած ըլլայ դառն, ժլատ,
Նորն թրւի շռայլ ու բազմախոստում,
Հինը կը մնայ կաղնի հաստարմատ,
Նորը՝ օդին մէջ թեւածող թռչուն:

Հինը կը մնայ կաղնի հաստարմատ,
Հասակն որուն բայց շանթն է տապալեր.
Ու կը մտածեմ, բեկուած ու վհատ,
Թէ արմատն նորէն պիտի տա՞յ ճիւղեր:

Գ. ՃԱՐՏԱՐ

---

digitised by A.R.A.R.@